

**ՖՈՒՏԲՈՒԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ**

Պրոֆեսիոնալ սպորտը, առաջին հերթին պրոֆեսիոնալ ֆուտբոլը, աշխարհի տնտեսության շարժիչ ուժերից է:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլը ձևավորվել է 19-րդ դ., Անգլիայում: 1885թ. կայացած հերթական ժողովից հետո Անգլիայի ֆուտբոլի ասոցիացիան հայտարարեց ֆուտբոլի պրոֆեսիոնալ հարթություն անցնելու մասին՝ թույլատրելով ֆուտբոլային ակումբներին վարձատրել իրենց կազմերում հանդես եկող ֆուտբոլիստներին²:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլային իրավահարաբերություններին մասնակցում են բազմաթիվ սուբյեկտներ՝ ֆուտբոլային ակումբներ, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ, ֆուտբոլային դպրոցներ, լիգաներ, ֆեդերացիաներ, մարզիչներ, մրցավարներ և այլն: Դրանցից երկուսը՝ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներն ու ֆուտբոլային ակումբները, հանդիսանում են պրոֆեսիոնալ ֆուտբոլային իրավահարաբերությունների հիմնական սուբյեկտները, քանի որ առանց այս երկու սուբյեկտների չի կարող խոսք լինել պրոֆեսիոնալ ֆուտբոլային մրցաշարերի մասին: Այլ կերպ ասած, հենց պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներն ու ֆուտբոլային ակումբներն են ապահովում պրոֆեսիոնալ ֆուտբոլի գոյությունը: Պրոֆեսիոնալ ֆուտբոլային իրավահարաբերությունների մյուս սուբյեկտները կոչված են օժանդակելու այս երկու սուբյեկտներին՝ իրենց գործունեությունն իրականացնելիս:

«Ֆուտբոլային ակումբների իրավական կարգավիճակը ՀՀ-ում» վերնագիրը կրող հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել վեր հանել ՀՀ-ում ֆուտբոլային ակումբների իրավական կարգավիճակի օրենսդրական ամրագրման մի շարք թերություններ, ինչպես նաև ՀՀ իրավական ակտերում առկա որոշ բացեր, մատնանշել ոլորտը կարգավորող ՀՀ իրավական ակտերի կատարելագործման ուղիները արտասահմանյան մի շարք երկրների, այդ թվում, Իսպանիայի Թագավորության, Ֆրանսիայի Հանրապետության, Բելառուսի Հանրապե-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Հայկյանց:

² Տե՛ս <http://www.betsstory.ru/istorija-professionalnogo-futbola-v-anglii.phtml>

տության և Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) փորձը հաշվի առնելով:

Ինչպես արդեն նշվել է, ֆուտբոլային ակումբները հանդիսանում են պրոֆեսիոնալ սպորտի մասնակիցներ, ուստի, ակումբների իրավական կարգավիճակը մեծապես կախված է նրանից, թե կոնկրետ երկրի օրենսդրությունը ինչպիսի իրավանորմերի է առաջնություն տալիս պրոֆեսիոնալ սպորտի իրավական կարգավորման հարցում: Նշվածը հաշվի առնելով, մինչև ակումբների իրավական կարգավիճակին առնչվող խնդիրները քննարկելը, նպատակահարմար ենք համարում նախ անդրադառնալ պրոֆեսիոնալ սպորտի իրավական կարգավորման վերաբերյալ աշխարհում ձևավորված 2 հիմնական ամերիկյան և եվրոպական մոտեցումներին:

Այսպես, իր ձևավորումից ի վեր պրոֆեսիոնալ սպորտն ԱՄՆ-ում դիտվել է որպես ձեռնարկատիրական գործունեության հատուկ տեսակ³: 19-րդ դ. կեսերին ԱՄՆ-ում ի հայտ եկան թիմային սպորտաձևերի առաջին ակումբները, որոնք աստիճանաբար միավորվեցին լիգաներում՝ ընդհանուր խնդիրները (օրինակ՝ խաղի կանոնները և մրցումների ժամանակացույցը որոշելը) համատեղ լուծելու համար⁴: Ստեղծված լիգաներն ու ասոցիացիաները ակումբների գործունեությունը ծառայեցնում էին շահույթ ստանալուն: Իրենց տնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով լիգաները, բացի մրցումների կազմակերպումից և անցկացումից, կանոններ էին սահմանում ակումբների և պրոֆեսիոնալ մարզիկների աշխատանքային հարաբերությունները կանոնակարգելու համար՝ որոշակի սահմանափակումներ սահմանելով մարզիկների համար: Այսպիսով, սպորտային շուկայում թելադրելով խաղի կանոնները՝ լիգաները մոնոպոլ դիրք էին ձեռք բերում: Պրոֆեսիոնալ սպորտային իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկությունը նրանում էր, որ, ի տարբերություն ձեռնարկատիրական գործունեության այլ ոլորտների, գործատուները և աշխատողներն ազատ չէին իրենց փոխհարաբերությունների ձևերն ու կարգը սահմանելիս և ստիպված էին ենթարկվել մոնոպոլ դիրք ունեցող լիգաների սահ-

³ Տե՛ս **Кузнецов И. С.**, Решение Верховного Суда США 1922 года как начало становления спортивного права в США, Москва, "Юридический мир", 2009, N 8:

⁴ Տե՛ս **Гусов К. Н., Шевченко О. А.**, Спортивное право. Правовой статус спортсменов, тренеров, спортивных судей и иных специалистов в области физической культуры и спорта, М., Проспект, 2011 г., էջ 16:

մանած կանոններին, որոնք հաճախ տարբերակումներ էին դնում տարբեր ակումբների միջև և սահմանափակում նրանց իրավունքները: Այդ կանոններին չենթարկվելու դեպքում ակումբները զրկվում էին սպորտային շուկայում գործունեություն իրականացնելու իրավունքից⁵: Ըստ էության, լիգաների նման որոշումներն ընդունվում էին դրանց անդամ մի քանի ակումբների միջև ձեռք բերված համաձայնությունների արդյունքում, որոնք ցանկանում էին դուրս մղել մյուս՝ ավելի թույլ ակումբներին պայքարից և մոնոպոլիզացնել շուկան: Այսպիսով, ի տարբերություն Եվրոպայի, ԱՄՆ-ում սպորտի կոմերցիալիզացման հարցում առաջնայինը ոչ թե առանձին ակումբների, այլ լիգաների դերն էր:

19-րդ դ. 2-րդ կեսին ԱՄՆ-ում արդեն գործում էին բեյսբոլի 3՝ Ֆեդերալ, Ազգային և Նահանգային լիգաները: Դրանցից վերջին երկուսի միավորումը հանգեցրեց Ֆեդերալ լիգայի սնանկացմանը: Այս իրադարձությունից հետո Բալտիմոր բեյսբոլի ակումբը դիմեց դատարան ընդդեմ Ազգային և Ամերիկյան բեյսբոլային լիգաների՝ նրանց մեղադրելով Ֆեդերալ բեյսբոլային լիգայի դեմ ուղղված հակամրցակցային համաձայնության գալու և բեյսբոլի շուկան մոնոպոլիզացնելու մեջ և դատարանից պահանջեց պատասխանողների նկատմամբ կիրառել Շերմանի 1890 թ. հակատրեստային օրենքը, որն անօրինական էր համարում ցանկացած պայմանագիր, համաձայնություն կամ միավորում, ուղղված ԱՄՆ-ի տարբեր նահանգներում գործող կազմակերպությունների՝ միմյանց միջև կամ արտասահմանյան կազմակերպությունների հետ ձեռք բերված համաձայնությամբ **առևտրի կազմակերպմանը**, շուկայում մոնոպոլ դիրք գրավելու նպատակով: 29.05.1922 թ. ԱՄՆ-ի Գերագույն դատարանը գործի քննության արդյունքում հանգեց այն եզրակացության, որ Շերմանի օրենքը պրոֆեսիոնալ սպորտի ոլորտում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառելի չէ հետևյալ պատճառներով՝

1. նախ, պատասխանողների գործունեությունը չի կարող համարվել տարբեր նահանգներում գործող անձանց միջև ձեռք բերված համաձայնություն, քանի որ նրանցից առնվազն մեկի՝ Ազգային լիգայի հիմնադիրների գաղափարի համաձայն՝ լիգան պետք է գործունեություն իրականացնե՛ր ԱՄՆ ոչ թե 1, այլ 7 նահանգներում, և հաշ-

⁵ Տե՛ս **Кузнецов И. С.**, Решение Верховного Суда США 1922 года как начало становления спортивного права в США, Москва, "Юридический мир", 2009, N 8:

վի առնելով այն հանգամանքը, որ լիզայի անդամ ակումբներից յուրաքանչյուրի գործունեությունն անհնարին կլինեին առանց մյուս ակումբների, ուստի այս հարաբերությունների միջնահանգային բնույթը դրանց առանցքային և անբաժանելի հատկանիշն է: Դատարանը գտավ նաև, որ տարբեր քաղաքների և նահանգների ակումբների միջև խաղերում մեծ կարևորություն ունի մրցակցության տարրը: Հանդիսատեսի համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն խաղերը, որոնց մասնակցում են տարբեր նահանգների (հատկապես Հյուսիսի և Հարավի) ակումբներ: Դատարանը գտավ, որ պետք է տարբերակել բեյսբոլը որպես սպորտ, որը զվարճանալու և ֆիզիկական առողջությունը պահպանելու միջոց է և բեյսբոլը որպես բիզնես, որի էությունը կայանում է մրցաշարեր կազմակերպելու և անցկացնելու մեջ: Դատարանը նշեց, որ պատասխանողները զբաղվում են բեյսբոլով որպես բիզնես և նպատակ ունեն իրենց գործունեությունից շահույթ ստանալու: Երբ թիմերը մեկնում են այլ նահանգ խաղի, դա կատարվում է գործատուի (լիզայի) հրահանգով, որը շահույթ ստանում է հենց նմանատիպ բիզնես-օպերացիաներից: Իսկ շահույթ ստանալու համար շատ կարևոր է «միջնահանգային» ասպեկտը: Դատարանն ընդգծեց որ ակումբների շահույթը գոյանում է նաև մարզադաշտեր այցելողների գնած տոմսերի արժեքից, և որ ակումբները շահույթ ստանում են ոչ միայն տնային հանդիպումների ժամանակ վաճառված տոմսերից, այլև արտագնա խաղերի տոմսերի վաճառքից: Դատարանը նշեց, որ, չնայած, պատասխանող լիզաների անդամ ակումբներն ունեն իրենց իրավաբանական հասցեները որևէ կոնկրետ նահանգում, սակայն բիզնես վարելու տեսանկյունից, նրանք չունեն գտնվելու մշտական վայր, քանի որ մրցումների գրաֆիկով պայմանավորված անընդհատ տեղափոխվում են մի վայրից մեկ այլ վայր: Ուստի տարբեր նահանգների միջև կապերը ոչ մի այլ բիզնեսում այնքան սերտ չեն, ինչպես սպորտում:

2. Դատարանը նաև գտավ, որ պատասխանողների գործունեությունն ապրանքների առևտուր չէ, քանի որ մարզիկներին կամ նրանց գործունեությունը չի կարելի ապրանք, ուստի և առևտրի առարկա համարել⁶:

⁶ Տե՛ս <https://supreme.justia.com/cases/federal/us/259/200/case.html>
<https://supreme.justia.com/cases/federal/us/259/200/case.html>

Այսպիսով, դատարանը գտավ՝ քանի որ առանց միջնահանգային ասպեկտի սպորտային գործունեությունն անհնարին է, իսկ ֆուտբոլիստները և նրանց գործունեությունը չեն կարող դիտվել որպես ապրանք, ուստի հակատրեստային օրենքն այս դեպքում կիրառելի չէ: Նման որոշմամբ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը սպորտային հարաբերությունների կարգավորման համար առաջնային համարեց սպորտային ասոցիացիաների, լիգաների սահմանած կանոնները:

Այս դատական նախադեպից հետո սպորտի ոլորտում մոնոպոլիան վերացնելու համար բազմաթիվ օրենսդրական նախաձեռնություններ եղան, սակայն սպորտային լիգաները լոբինգի շնորհիվ կարողացան թույլ չտալ դրանց ընդունումը ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից: Ստեղծված իրավիճակը շրջանցելու տարբեր փորձեր ձեռնարկվեցին: Դրանց լավագույն օրինակներից է ԱՄՆ-ում եվրոպական ֆուտբոլի լիգայի (Major league soccer, այսուհետ՝ MLS) ստեղծումը, որը ոչ թե տարբեր ակումբների կողմից ստեղծված միություն է, այլ իրավաբանական անձ, որին պատկանում են ԱՄՆ-ի ֆուտբոլային առաջնությունում հանդես եկող ֆուտբոլային ակումբները ամբողջությամբ, կամ դրանց բաժնետոմսերի 50 %-ից ավելին: Այսպիսով, բացառվում են ԱՄՆ-ի ֆուտբոլային առաջնությունում հանդես եկող ակումբների միջև մյուս ակումբների դեմ ձեռք բերվող համաձայնությունները, քանի որ դրանք ոչ թե հանդիսանում են MLS-ի անդամներ, այլ բոլորն էլ պատկանում են մեկ կազմակերպության՝ MLS-ին, հակատրեստային օրենսդրությունն էլ տարածվում է MLS-ի ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ⁷:

Ինչ վերաբերում է Եվրոպային, ապա այստեղ պրոֆեսիոնալ սպորտի վերաբերյալ ձևավորված իրավական մոտեցման վրա մեծ ազդեցություն է ունեցել Եվրոպական ընկերակցությունների դատարանի *Walrave and Koch v. Union Cycliste Internationale* և *Dona v. Mantero* գործերով⁸, հետևյալ եզրահանգումը. «.....Քանի որ պրոֆեսիոնալ մարզիկների գործունեությունը հատուցելի է, ուստի պրոֆեսիոնալ սպորտի նկատմամբ տարածվում են Ընկերակցության նորմերը..... ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ,..... իսկ սպորտային ասոցիացիաների և լիգաների կանոնները

⁷ Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/MLS>

⁸ Տե՛ս **Гуськов С. И.**, Регулирование отношений в игровых видах профессионального спорта США, Экономика. Политика. Идеология. М., 1991, № 12, էջ 105-113:

պետք է համապատասխանեն օրենսդրությանը»⁹: Այսինքն, պրոֆեսիոնալ սպորտային հարաբերությունների կարգավորման մեջ առաջնային դերը Ընկերակցությունների դատարանը վերապահել է պետությանը, ոչ թե սպորտային լիգաներին, ինչպես ԱՄՆ-ում է:

Այժմ բազմաթիվ եվրոպական պետություններում գործում են սպորտային օրենսգրքեր կամ պրոֆեսիոնալ սպորտային իրավահարաբերությունները կարգավորող օրենքներ:

ՀՀ-ն պրոֆեսիոնալ սպորտի իրավական կարգավորման համար ընտրել է եվրոպական մոդելը և 26.06.2001 թ. ընդունել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքը: Օրենքի 2-րդ հոդվածում տրված է պրոֆեսիոնալ սպորտի հետևյալ հասկացությունը.

Պրոֆեսիոնալ սպորտ՝ սպորտի բնագավառում **շահույթ հետապնդող գործունեություն**, որին մասնակցում են պրոֆեսիոնալ մարզական կազմակերպությունները (լիգաներ, ակումբներ, թիմեր), սպորտը որպես մասնագիտություն ընտրած մարզիկները:

Նույն օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է՝

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի մասն են կազմում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի **հետևյալ հասարակական կազմակերպությունները՝**

ա) Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն.

բ) մարզաձևերի ազգային ֆեդերացիաները.

գ) այլ մարզական հասարակական կազմակերպությունները, միությունները և **ընկերությունները:**

Նույն օրենքի 14-րդ հոդվածը Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգում է ընդգրկել այլ մարզական հասարակական կազմակերպությունները, միությունները, ընկերությունները և ակումբները՝ սահմանելով՝

Այլ մարզական հասարակական կազմակերպությունները, միությունները, ընկերություններն ու **ակումբներն իրականացնում են ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական հանրային միջոցառումներ, ինչպես նաև մարզաձևերի զարգացման և մարզական հերթափոխի պատրաստման ծրագրեր:**

⁹ Տե՛ս **Гусов К. Н., Шевченко О. А.**, Спортивное право. Правовой статус спортсменов, тренеров, спортивных судей и иных специалистов в области физической культуры и спорта, М., Проспект, 2011 г., էջ 16-17:

Փաստորեն, օրենքը հասարակական կազմակերպությունների թվում ընդգրկել է նաև ընկերությունները, ինչն օրենսդրական կոպիտ սխալ է:

Բացի այդ, չնայած, որ օրենքում օգտագործվում է «ակումբ» տերմինը, դրա սահմանումը տրված չէ, որևէ անդրադարձ չկա նաև մարզական ակումբների իրավական կարգավիճակին:

Խնդիրը մասամբ լուծվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (այսուհետ՝ ՀՖՖ) կողմից ընդունված Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի (այսուհետ՝ ՖԿՏ կանոնակարգ) վերջին 2012 թ. խմբագրության 2-րդ հոդվածում, որտեղ տրված է ֆուտբոլային ակումբի հետևյալ բնորոշումը

Իրավաբանական անձ՝ **անկախ կազմակերպարավական ձևից կամ կազմակերպություն**, որը թիմեր է ներկայացնում ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումներին, ներդրումներ է կատարում ֆուտբոլիստների մարզման և ուսուցման ոլորտում:

Ինչպես կարելի է նկատել, ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքը սահմանում է, որ պրոֆեսիոնալ սպորտը շահույթ հետապնդող գործունեություն է, նման մոտեցումը միանգամայն ընդունելի է, քանի որ ֆուտբոլային ակումբների գործունեությունը ներառում է պրոֆեսիոնալ սպորտային մրցումներին մասնակցելը, տրանսֆերային գործարքներ կնքելը, մարզադաշտերը և մարզագույքը վարձակալության հանձնելը, սպորտային մրցումների տոմսերի վաճառքը, ակումբի տարբերանշանները կրող իրերի վաճառքը, գովազդները, խաղերի հեռարձակման իրավունքի վաճառքը և այլն, որոնք շահույթ են բերում ակումբներին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվ. համաձայն:

Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց **գործունեությանը շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային)** կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ֆուտբոլային ակումբները ՀՀ-ում պետք է ստեղծվեն որպես առևտրային կազմակերպություններ, քանի որ նրանց գործունեության նպատակը շահույթ ստանալն է: Ֆուտբոլային ակումբների ստեղծումը որպես ոչ առևտրային կազմակերպություններ այն դեպքերում, երբ ֆուտբոլային ակումբների հիմնադիրները, ակումբ հիմնադրելով, շահույթ ստանալու նպատակ չհետապնդեն, պարզապես ցանկանան նպաստել սպորտի զար-

զացմանը՝ ստացված շահույթը չբաշխելով, այլ ուղղելով սպորտի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերի ֆինանսավորմանը, համարում ենք անընդունելի հետևյալ պատճառներով՝

1. ցանկացած ֆուտբոլային ակումբ հետապնդում է սպորտը զարգացնելու նպատակ: Դա պայմանավորված է նրանով, որ սպորտի զարգացումն իր հերթին շահույթի նոր հնարավորություններ է ընձեռում ակումբներին: Սպորտի զարգացումը ակումբները փորձում են իրականացնել տարբեր միջոցներով, այդ թվում՝ իրենց կազմերը հզորացնելով և պրոֆեսիոնալ սպորտային մրցաշարերում իրենց մասնակցությամբ՝ առնվազն ակումբների միջև մրցակցությունը մեծացնելով, առավելագույնը հաղթանակի հասնելով:

2. Ֆուտբոլային ակումբների գործունեության հիմնական ուղղությունը պրոֆեսիոնալ մրցաշարերի մասնակցելն է, իսկ սպորտային մրցումներն անցկացվում են հաղթողներին և մնացած տեղերը զբաղեցնող մասնակիցներին որոշելու և մրցանակային ֆոնդը նրանց միջև բաշխելու համար: Պրոֆեսիոնալ սպորտային մրցաշարերին մասնակցելիս՝ ակումբները, եթե այլ գործարքներ չկնքեն, ապա, տոմսերի վաճառք իրականացնել պարտավոր են, քանի որ տոմսերի վաճառքից ստացված գումարներից հատկացումներ կատարվում են նաև մրցակից թիմերին: Այսինքն, պրոֆեսիոնալ սպորտային մրցաշարերին մասնակցելով, ակումբներն արդեն իսկ իրականացնում են շահույթ ստանալուն ուղղված գործունեություն, քանի որ սպորտային մրցաշարերին մասնակցությունն անգամ շահույթ է բերում այդ ակումբներին, իսկ մրցանակային տեղեր զբաղեցնելը, ինչին ձգտում է յուրաքանչյուր պրոֆեսիոնալ ակումբ՝ հետապնդելով սպորտը զարգացնելու նպատակ, ապահովում է լրացուցիչ ավելի բարձր եկամտով:

3. Ինչ վերաբերում է ստացված շահույթը ակումբի հիմնադիրների միջև չբաշխելուն, ապա շահույթը չբաշխելը դեռ չի նշանակում, որ իրավաբանական անձն առևտրային չէ: Իրավաբանական անձի շահույթ ստանալու նպատակը (որը հետապնդում է ֆուտբոլային ակումբն այնքանով, որքանով ստեղծվում է պրոֆեսիոնալ մրցաշարերի մասնակցելու համար), ՀՀ քաղ. օր. 51-րդ հոդվածի իմաստից ելնելով, արդեն իսկ բավարար է այն առևտրային կազմակերպություն համարելու համար: Շահույթը բաշխել-չբաշխելու խնդիրը երկրորդական է, քանի որ, հիմնադիրներն իրենք են որոշում, թե ինչպես վարվել ստացված գումարների հետ, ՀՀ քաղ. օր. 82-րդ, 90-րդ, 114-րդ

հողվ. բովանդակությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առևտրային կազմակերպության ստացած շահույթը կարող է և ընդհանրապես չբաշխվել, ի վերջո, եթե առևտրային կազմակերպությունը շահույթ չի ստանում կամ, ՀՀ քաղ. օր. վերոնշյալ հոդածների ուժով, չի բաշխում ստացված շահույթը, կազմակերպությունը չի դադարում առևտրային համարվելուց:

4. Ոչ առևտրային կազմակերպությունները հիմնադրվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող գործունեություն իրականացնելու համար, հստակ պետք է լինեն ինչպես ոչ առևտրային կազմակերպության նպատակները, այնպես էլ գործունեության ձևերը, որոնք պետք է տարբերվեն առևտրային գործունեության իրականացման ձևերից: Իհարկե, ՀՀ քաղ. օր. 51-րդ հոդվ. ոչ առևտրային կազմակերպություններին հնարավորություն տալիս է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ (ստեղծելով ընկերություններ կամ ընկերակցություններ կամ մասնակցելով դրանց), այն դեպքում, երբ դա ծառայում է նրանց նպատակների իրականացմանը, բայց ոչ մի դեպքում ձեռնարկատիրական գործունեության իրականացումը չպետք է դառնա ոչ առևտրային կազմակերպության հիմնական գործունեությունը: Այս համատեքստում, եթե ենթադրենք, որ ֆուտբոլային ակումբները կարող են ստեղծվել ոչ առևտրային կազմակերպությունների համար սահմանված կազմակերպատիրավական որևէ ձևով, ապա այս դեպքում ինչպես տարբերել որպես առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ գրանցված ֆուտբոլային ակումբների գործունեությունը: Ամեն դեպքում, պրոֆեսիոնալ ակումբի գործունեության հիմնական ձևը պրոֆեսիոնալ մրցաշարերին մասնակցելն է, որը ենթադրում է նաև տոմսերի վաճառք, տրանսֆերային գործարքներ, գովազդի տեղադրում իրեն պատկանող մարզադաշտում և այլն, ուստի ինչպիսին պետք է լինի ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ֆուտբոլային ակումբի հիմնական գործունեությունը, որ ուղղված չլինի շահույթ ստանալուն և որը նրան տարբերակի առևտրային գործունեություն իրականացնող ակումբից՝ միննույն ժամանակ պահպանելով ֆուտբոլային ակումբի էությունը:

Ի վերջո, եթե որևէ անձ ցանկանում է նպաստել սպորտի զարգացմանը և իրոք չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ, ապա կարող է կառուցել մարզաբազաներ և անվճար տրամադրել ակումբներին, ստեղծել ֆուտբոլային և մարզչական դպրոցներ, այսինքն նպաստել սպորտի զարգացմանն այնպիսի գործունեությամբ,

որը կապված չէ այնպիսի մեծածավալ բիզնես-օպերացիաների հետ, ինչպիսին ֆուտբոլային ակումբների դեպքում է:

Վերոգրյալի կապակցությամբ անդրադառնանք նաև ՀՀ Արդարադատության նախարարության կայքում վերջերս տեղադրված Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի նախագծին¹⁰, որի 8-րդ հոդվածը սահմանում է՝

Կազմակերպությունը կարող է իր սահմանած նպատակներին համապատասխան **անձամբ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն** կամ մասնակցել դրան:

Ընդ որում, այս նախագիծը որևէ սահմանափակում չի նախատեսում ՀԿ-ների կողմից անձամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հարցում:

Հաշվի առնելով, որ ՀՀ քաղ. օր. կամ ՀՀ այլ օրենսդրական ակտ, ի տարբերություն, օրինակ, Գերմանիայի առևտրային օրենսգրքի 2-րդ հոդվ., չի սահմանում գործունեության տեսակների ցանկ, որը կարող է բացառապես առևտրային կազմակերպություններն իրականացնել, այլ սահմանում է միայն, որ շահույթ ստանալու նպատակի առկայությունը կամ բացակայությունն է առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարբերակման առանցքային հատկանիշը, կարծում ենք, որ նման նորմի սահմանումը կվտանգի շահույթ ստանալու նպատակ հետապնդող և նման նպատակ չհետապնդող գործունեության միջև եղած սահմանները և կստեղծվեն չարաշահումների և փողերի վճարման մեծ հնարավորություններ (կստեղծվեն բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք, հոչակելով շահույթ ստանալուն չուղղված տարբեր նպատակներ, կսկսեն անձամբ զբաղվել ցանկացած բիզնեսով՝ ստացված շահույթը յուրացնելով տարբեր ծրագրերի իրականացման անվան տակ):

Այսպիսով, կարծում ենք՝ քանի որ ողջ աշխարհում ընդունված մոտեցում է, որ պրոֆեսիոնալ սպորտը շահույթ, եկամուտ ստանալուն ուղղված գործունեություն է, ուստի նման գործունեություն իրականացնելու նպատակով ստեղծված իրավաբանական անձինք չեն կարող գրանցվել ոչ առևտրային կազմակերպությունների համար սահմանված կազմակերպաիրավական ձևերով:

¹⁰ St´u <http://justice.am/legal/view/article/713>

Անդրադառնանք այս խնդրի լուծմանը տարբեր երկրների դրսևորած մոտեցումներին և փորձենք առաջարկել խնդրի լուծման մեր տարբերակը:

Բելառուսի հանրապետության 2013 թ. սպորտային օրենսգրքի նախագծի 14-րդ հոդվածը սահմանում է սպորտային իրավահարաբերությունների սուբյեկտների շրջանակը՝ դրանք բաժանելով 3 խմբի՝

1. սպորտի կառավարմանը մասնակցող սուբյեկտներ,
2. սպորտային մրցումների անմիջականորեն մասնակցող սուբյեկտներ,
3. սպորտի զարգացմանը, սպորտային մրցումների կազմակերպմանն ու անցկացմանն օժանդակող սուբյեկտներ:

Սպորտային մրցումներին անմիջականորեն մասնակցող սուբյեկտները, ըստ նշյալ նախագծի, հանդիսանում են մարզիկները, սպորտային ակումբները, մարզիչներն ու մրցավարները: Ըստ նույն նախագծի 18-րդ հոդվածի՝ սպորտային ակումբները կարող են ստեղծվել օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպչաիրավական ձևով: Սակայն պետք է նշել, որ Բելառուսի սպորտային օրենսգրքի նախագիծը տալիս է պրոֆեսիոնալ սպորտի հետևյալ բնորոշումը:

Պրոֆեսիոնալ սպորտ- սպորտի այն մասը, որը ենթադրում է ձեռնարկատիրական, աշխատաքային և օրենքով չարգելված այլ գործունեության իրականացում՝ ուղղված սպորտային միջոցառումների կազմակերպումից և անցկացումից եկամուտներ ստանալուն:

Այսպիսով, չնայած, որ Բելառուսի սպորտային օրենսգրքի նախագիծը բավականին հաջող է սահմանել պրոֆեսիոնալ սպորտի հասկացությունը և սպորտային իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակը, այնուամենայնիվ, ինչպես և մեր օրենսդիրը, հնարավոր է համարել սպորտային ակումբների հիմնադրումը ցանկացած կազմակերպչաիրավական ձևով:

ՌԴ 04.12.2007 թ. սպորտի մասին օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ կետում տրված է պրոֆեսիոնալ սպորտի հետևյալ բնորոշումը՝

Պրոֆեսիոնալ սպորտ - սպորտի մաս, ուղղված սպորտային մրցումների կազմակերպմանն ու անցկացմանը, որոնց, որպես իրենց հիմնական գործունեություն, պատրաստվելու և մասնակցության համար մարզիկները կազմակերպիչներից ստանում են վարձատրություն և/կամ աշխատավարձ:

Նույն հոդվածի 30-րդ կետում տրված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կազմակերպության հետևյալ բնորոշումը.

Իրավաբանական անձ, անկախ կազմակերպաիրավական ձևից, որի հիմնական գործունեությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառն է: Սույն օրենքի դրույթները տարածվում են նաև այն անհատ ձեռներեցների նկատմամբ, ովքեր իրենց հիմնական գործունեությունն իրականացնում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում:

ՌԴ սպորտի մասին օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ **սպորտային ակումբներն** այն իրավաբանական անձինք են, որոնք իրականացնում են մարզումային, մրցումային և ֆիզդաստիարակչական գործունեություն և կարող են հիմնադրվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից օրենսդրությանը համապատասխանող ցանկացած կազմակերպաիրավական ձևով:

Փաստորեն, ՌԴ Սպորտի մասին օրենքը պրոֆեսիոնալ սպորտի հասկացությունն ամրագրելիս, դրանում չի ներառել սպորտային մրցումների կազմակերպիչների և մասնակիցների շահույթ ստանալու նպատակը, ուստի, ամրագրել է, որ սպորտային ակումբներն էլ կարող են ստեղծվել ցանկացած կազմակերպաիրավական ձևով: Մակայն, ՌԴ-ում սպորտային մրցումների կազմակերպումն ու անցկացումը տեղի է ունենում նույն մեխանիզմով, ինչ և այն երկրներում, որտեղ պրոֆեսիոնալ սպորտը դիտվում է որպես շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն (մրցումների մասնակիցներն ու հաղթողները ստանում են դրամական պարգևներ, ակումբները շահույթ են ստանում իրենց խաղերի հեռարձակումներից, զովագրային արշավներից, մարզիկների մարզաշապիկների, ակումբների տարբերանշանները կրող իրերի վաճառքից, տրանսֆերային գործարքներից և այլն), ուստի, ՌԴ-ում ևս պրոֆեսիոնալ սպորտը շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն է, չնայած օրենսդրական ուղղակի ամրագրման բացակայությանը:

31.05.2007 թ. Պրոֆեսիոնալ սպորտի մասին **ԱՊՀ նմուշային օրենքի** 1-ին հոդվածում տրված են պրոֆեսիոնալ սպորտի և պրոֆեսիոնալ սպորտային ակումբի հետևյալ հասկացությունները՝

Պրոֆեսիոնալ սպորտ՝ սպորտային մրցաշարերին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձանց պրոֆեսիոնալ սպորտային գործունեություն, որը նպատակաուղղված է սպորտային բարձր արդյունքների հասնելուն և եկամուտ ստանալուն:

Պրոֆեսիոնալ սպորտային ակումբ. պետության օրենսդրության հիման վրա գործող իրավաբանական անձ, որը պայմանագրային կամ անդամության հարաբերությունների մեջ է մտնում սպորտային ֆեդերացիայի կամ պրոֆեսիոնալ սպորտային կազմակերպության հետ, մասնակցում է սպորտային մրցաշարերի և այդ գործունեությունից շահույթ ստանում:

Այսպիսով, պրոֆեսիոնալ սպորտի մասին ԱՊՀ նմուշային օրենքը ևս պրոֆեսիոնալ սպորտային ակումբները դիտում է որպես առևտրային կազմակերպություններ:

Սպորտային ակումբների կարգավիճակն ամրագրելիս հետաքրքիր մոտեցում են դրսևորել Իսպանիայի և Ֆրանսիայի օրենսդիրները:

Իսպանիայի՝ 15.10.1990 թ. սպորտի մասին օրենքը պրոֆեսիոնալ սպորտը դիտում է որպես շահույթ ստանալուն ուղղված գործունեություն: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ **սպորտային ակումբները** ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միավորումներ են, որոնց նպատակն է մեկ կամ մի քանի սպորտաձևերի զարգացումը, ակումբների անդամների կողմից կոնկրետ սպորտաձևով մարզումների անցկացումը և մասնակցությունը սպորտային միջոցառումներին և մրցումներին:

Ըստ նույն օրենքի 14-րդ հոդվածի՝ սպորտային ակումբները կարող են հիմնադրվել հետևյալ կազմակերպատիրավական ձևերով՝

1. Ունիտար սպորտային ակումբներ,
2. Հիմնական սպորտային ակումբներ,
3. Սպորտային բաժնետիրական ընկերություններ:

Ըստ նույն օրենքի 19-րդ հոդվածի սպորտային ակումբները կամ նրանց պրոֆեսիոնալ թիմերը, որոնք մասնակցում են համապետական պաշտոնական պրոֆեսիոնալ սպորտային մրցումներին, պետք է հիմնադրվեն սպորտային բաժնետիրական ընկերությունների տեսքով: Նման ընկերությունների վրա տարածվում են բաժնետիրական ընկերությունների մասին կանոնները՝ հաշվի առնելով այս ակումբների գործունեության առանձնահատկությունները:

Ինչպես կարելի է նկատել, իսպանական օրենսդիրն ավելի մանրամասն կարգավորում է նախատեսել ակումբների կարգավիճակը սահմանելիս, իրավացիորեն նշելով, որ պաշտոնական սպորտային պրոֆեսիոնալ մրցաշարերին մասնակցող ակումբները պարտադիր պետք է հիմնադրվեն որպես բաժնետիրական ընկերություններ:

Նման մոտեցումը լիովին արդարացված է, քանի որ պաշտոնական պրոֆեսիոնալ մրցաշարերին մասնակցելիս, տրանսֆերներ իրականացնելիս ակումբները և դրանց հիմնադիրները հենց շահույթ ստանալու նպատակ են հետապնդում: Սակայն, այնքան էլ համաձայն չենք իսպանական օրենսդրի այն մոտեցմանը, որ պաշտոնական պրոֆեսիոնալ մրցաշարերին մասնակցելու նպատակ չհետապնդող սպորտային կազմակերպություններն օրենքում ևս անվանվում են ակումբներ: Ըստ էության, ունիտար և հիմնական ֆուտբոլային ակումբները նպատակաուղղված են կադրերի պատրաստմանը, մարզումային գործընթացը կազմակերպելուն, ոչ թե մրցումներին մասնակցելուն, ուստի առավել նպատակահարմար ենք համարում դրանք անվանել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի ոչ առևտրայի կազմակերպություններ:

Ֆրանսիայի սպորտային օրենսգիրքը պրոֆեսիոնալ սպորտը ևս դիտում է որպես շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն: Օրենսգրքում առանձնացված են սպորտի ոլորտում գործունեություն իրականացնող այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են **սպորտային ասոցիացիաները և սպորտային ընկերությունները**: Օրենսգրքի L-121-1 հոդվածի համաձայն՝ սպորտային ասոցիացիաները հիմնադրվում են Ասոցիացիաների մասին 01.06.1901 թ. օրենքով սահմանված կարգով: Ասոցիացիաների մասին օրենքն էլ տարածվում է միայն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների վրա: Ուստի, սպորտային ասոցիացիաներն այն կազմակերպություններն են, որոնք գործունեություն են իրականացնում սպորտի բնագավառում՝ առանց շահույթ ստանալու նպատակի (դպրոցական և ուսանողական սպորտային ասոցիացիաներ, հաշմանդամների սպորտային ասոցիացիաներ և այլն):

Նույն օրենքի L-122-1 հոդվածի համաձայն՝ սպորտային ֆեդերացիայի անդամ յուրաքանչյուր սպորտային ասոցիացիա, որը մասնակցում է եկամուտ բերող սպորտային միջոցառումների կազմակերպմանը կամ այդ միջոցառումներին մասնակցելու համար վարձատրում է իր մարզիկներին, այդ գործունեությունը կառավարելու համար պետք է ստեղծի առևտրային ընկերություն, որի գործունեությունը կարգավորվում է Ֆրանսիայի առևտրային օրենսգրքով:

Ֆրանսիան հստակ ամրագրել է, որ յուրաքանչյուր ասոցիացիա, որը կցանկանա զբաղվել սպորտի բնագավառում շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեությամբ, պետք է հիմնադրի առևտ-

րային ընկերություն, ասվածը հավասարապես վերաբերում է նաև այլ կազմակերպություններին և ֆիզիկական անձանց:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հասարակական կազմակերպություններ» տերմինի փոխարեն ամրագրել, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կազմակերպություններ» հասկացությունը, որն իր մեջ կներառի ֆուտբոլային ակումբները, ֆեդերացիաները, լիգաները, մարզադպրոցները, տեխնիկական կենտրոնները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում գործունեություն իրականացնող այլ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները: Ինչ վերաբերում է սպորտային ակումբների իրավական կարգավիճակի սահմանմանը, ապա առաջարկում ենք հետևյալ սահմանումը:

Սպորտային ակումբ - առևտրային կազմակերպություն, որի հիմնական նպատակը կոնկրետ սպորտաձևով պրոֆեսիոնալ մարզիկների մարզումների կազմակերպումը և պաշտոնական պրոֆեսիոնալ սպորտային մրցումներին մասնակցությունն է:

Առաջարկում ենք նաև սպորտային ֆեդերացիաների իրավական ակտերում տրված ակումբների հասկացությունները համապատասխանեցնել վերը նշված հասկացությանը:

Айкуи Седракян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

ПРАВОВОЙ СТАТУС ФУТБОЛЬНЫХ КЛУБОВ В РА

В статье представлены понятия «профессиональный спорт» и «футбольный клуб» как правовые категории. В статье мы попытались выявить те проблемы, которые существуют в правовых актах РА, регулирующих сферу спортивных отношений и предложить пути для совершенствования законодательства. В статье было также представлено спортивное законодательство ряда зарубежных стран, зарубежный опыт определения правового статуса спортивных клубов. С учетом зарубежного опыта и анализом действующего законодательства РА мы попытались дать понятие спортивного клуба, которое содержит в себе и футбольные клубы.

THE LEGAL STATUS OF THE FOOTBALL CLUBS IN THE RA

In the article headed «The legal status of the football clubs in the RA» «professional sport» and «football club» definitions are presented as legal categories. We have tried to detect the problems of the RA legal acts which regulate sport legal relations and offer ways to improve the related legislation. In the article we have reverted to a number of foreign countrys' sport legislation, professional sport and professional sport club's legal status determining foreign experience. Taking into account foreign experience and analysing acting legislation of the RA have tried to determine sport club conception which also includes football clubs.

Բանալի բառեր՝ պրոֆեսիոնալ սպորտ, ֆուտբոլային ակումբ, ֆուտբոլային առաջնություն, շահույթ ստանալու գործունեություն, առևտրային կազմակերպություն, ոչ առևտրային կազմակերպություն:

Ключевые слова: профессиональный спорт, футбольный клуб, футбольная лига, деятельность извлечения прибыли, коммерческая организация, некоммерческая организация.

Key words: professional sport, football club, football league, action chasing a goal to receive profit, commercial organization, nonprofit organizations.